



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

թիւ 41

ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՔ ԱԶԳԱՅԻՆ ՊԱՏՐԻԱՐՔԱՐԱՆԻ

ԱՏԵՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

ԱԶԳԱՅԻՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎՈՅ

ԲԱՑՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ՔԱՌԱՍՈՒՆՈՒՄԷԿԵՐՈՐԴ

5 ԿԱՅԻՍ 1872



ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ

ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ Թ. Յ. ՔՐԻՐՔՅԱՆ

— 1872 —

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՄՏԻՎՈՒԹՅԱՆ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՄԱՍԻՍԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԿՐԹԱԳՐԱԿԱՆ ԿՈՄԻՏԵ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎ

ԲԱՅՈՒՄ 1870 ԱՄԻՆ

ՆԻՍՏ ԽԱ.

5 ՄԱՅԻՍ 1872

ՆԱԽԱԳԱՀ. — ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՐԻԱՐԿ

ԱՏԵՆԱՊԵՏ. — ԳՍՐԱԿԻՕԶԵԱՆ Կ. ԷՖ. (Գ. Ատենապետ)

ԿԱՐԳ ԽՆԴՐՈՑ

1. Վաւերացումն նորընտիր Երեսփոխանաց
2. Ընտրութիւն նորոց Գիւանի Ընդհ. ժողովոյ:
3. Հրատարում Ազգ. Վարչութեան Քաղ. ժողովոյ:
4. Նորոց ընտրութիւն Ազգ. Վարչութեան Քաղ. ժողովոյ:
5. Ատենական Կանոնադրութիւն:
6. Կաթուղիկոսական եւ Պատրիարքական յարաբերութիւնք:

Ատենական Կանոնադրութիւն ժամն անցած եւ ժողովոյն Ատենապետներէն ոչ ոք տակաւին ներկայացած ըլլալով, նախագահ Սրբազան Հօր հրաւիրման վրայ Կ. Է. Թիւրքեան Էֆէնտի առ ժամանակեայ կերպիւ Ատենապետի Սթոպր Կանցնի եւ կը բանայ ատենանք ժամ 7: Ինչ, Կանոնադրութեան 48 Երեսփոխանաց. արոց թիւը հետզհետէ եկող Երեսփոխաններով 54 ի կը յանդի:

Ատենապետ Էֆ. կը ծանուցանէ ժողովոյն թէ ազգ. Երեսփոխաններէն Տ. Թորէն Նագ. Նարպէյ, Տ. Թորէն Վրդ. Փոխ. Երուսաղէմայ, Այլատեան Մատթէոս Էֆ. եւ Աղնաւորեան Յովաննէս Էֆ. անձնական տկարութեան պատճառաւ այսօրեայ նստէն բացակայ մնալու ստիպուած ըլլալն Նախական յայտնած են. եւ կը յաւելու թէ ժողովը դեռ եւս մեծագոյն

մաս չընենալով թէ եւ օրուան խնդրոց վերայ միայն վիճարանութիւն ընելու համար խօսք պիտի տայ Երեսփոխանաց, բայց մինչեւ որ մեծագոյն մաս գոյանայ, խնդիրներն որոշուած չը պիտի կրնան առնուլ:

ՆԱԽԱԳԱՀ ՍՐԲԱԶԱՆ. — Չեմ կրնար ընդունիլ որ այսքան Երեսփոխաններ հաւաքուին եւ մեծագոյն մասին սպասելու համար անգործ մընան, Ըստ իս մեծագոյն մասին սպասելու համար դրուած օրէնքը չատ մասակար է, որ կանոնադրութեան զժողովն եւ տեսակ մը ստրկութեան կ'ենթարկէ զանի: Հետեւապէս կ'առաջարկեմ որ մեծագոյն մասի խնդիրն յուղուի այսօր եւ նոր որոշուած մը արուի:

Ատենապետ Էֆ. կը հրաւիրէ զժողովականս նախագահ Սրբազան Հօր առաջարկութեան վերայ իրենց դիտողութիւնը յայտնելու:

ՊԵՆՍԻԿԱՆ Թ. ԷՅԹ. — Սահմանադրութիւնը բացորոշապէս կը արամադրէ որ՝ առանց մեծագոյն մասի ներկայութեան ատեն չ' բացուի իսկ ընդ. ժողովս անկէ առաջ այն քրամադրութեան զարտադրութիւն մ'ըրաւ որոշելով որ առանց մեծագոյն մասի սպասելու ատեն բացուի, միայն վիճարանութիւն ըլլալու համար։ Ուրեմն՝ քանի որ որոշում մը կայ արդէն՝ պէտք է որ նոյն որոշման հետեւիմք. ինձ աւելորդ կը թուի այս խնդիրը նորէն յուզել։

ՕՍԿԱՆՆԵԱՆ Խ. ԷՅԹ. — Յարգոյ երեսփոխալքը, ինչպէս որ ասկէ առաջ ըսած էի, նորէն կը կրկնեմ. այս ժողովս առանց զեկի նաւու մը կը նմանի, որ երբէք կարող չէ ուղիք երթալ եթէ իրեն կարեւոր եղած կանոնադրութիւնը չունենայ, որով միայն Աղզին գործերը կրնան զիւրութեամբ յառաջ երթալ, եւ Սահմանադրութիւնն ալ այս նպատակին համար հաստատուած է. ուստի խնդրները կրնան զանազան կարգերու բաժանիլ, ինչպէս Ս. Նախագահ չոր առաջարկութիւնն ալ զայն կ'ենթադրէ։ Եւրոպայի ժողովներն օրինակ են մեզ. Անոնք երեք կարգի բաժնած են ժողովոյն գործերը. նախ՝ ներկայ գտնուած ժողովականներով ատեն կը բանաւ. երկրորդ՝ օրուան խնդրոց մէջէն մանր մուր եւ հասարակ բաները նախադաս ընելով ամենէն ստաջ զանոնք կ'որոշեն եւ կը լմնցնեն. եւ երրորդ՝ վիճարանութեան կարօտ ծանր խնդիրներու կը ձեռնարկեն, եւ երբ կարգը քուէի կուգայ, այն ատեն մեծագոյն մաս վնասելու կեննեն։ Ահա այսպէս գիւրաւ կը լուծուին խնդիրները, այս նպատակաւ եւս ալ կ'երկարագեմ Արագածն Նախագահ չոր առաջարկութիւնը մասօրէն մտած յայտարարեմ։

ՅՈՒԱԿԵՍԵԱՆ Տ. ԷՅԹ. — Նմանապէս ինչ ալ կ'երրորդեմ այդ առաջարկութիւնը, սակայն զի սոսկ քանի մը անտարբեր եւ պարտազանց երեսփոխանաց արծաթագին գերին չեմք, որ հոս գալով երկար ժամեր սպասեմք նոցա, գալլատեն եւ առանց գործ մը տեսնելու կաշկանդեալ մնամք. այս մեծ ապօրինաորութիւն է։ Ինչ ըսել է չորս հինգ շաբաթը մի անգամ դուրսորդ ժողովի համար մեծագոյն մաս չունենալ. Ասոր ոչ ձիւն կայ եւ ոչ ալ անձրեւ, ո՛րք են մնացեալ Աղզին երեսփոխանք. կը բողբեմ պարտազանց երեսփոխանաց գէժ, եւ կ'առաջարկեմ պատկառելի ժողովոյց, որ այս ցառոյն զարման ասնի, այսինքն ժողովականաց

առաջին երրորդ մասը բաւական համարի որոշում տալու համար։


ՊԵՆՍԻԿԱՆ Թ. ԷՅԹ. — Կը կարծէի թէ Օսկան էֆ. մեծագոյն մաս չ'իրաւ զոջայնչու միջոց մը պիտի ցուցնէ իւր առաջարկութեամբ, բայց այն ալ մեզ պէս կողքայ միայն եւ միջոց չը ցուցնէր. թէ եւ Եւրոպայի ժողովներէն օրինակ կը բերէ մեզ, բայց չեմք հասկնար թէ որ ժողովն է այդ. մեք մեր Սահմանադրութիւնն անոնցմէ օրինակած եմք։ Անոնք մեծագոյն մասով ատեն կը բանան եւ որոշման ատեն մեծագոյն մաս չեն վնասուեր. իսկ ընդ. ժողովս որոշում տալու համար մեծագոյն մաս վնասուել որոշեց, առանց ատենն բանալու համար մեծագոյն մասի սպասելու. որպէս զի մինչեւ որ մեծագոյն մաս զոյանայ, խնդիրները վիճարանութեան դրուին եւ լուսարանուելէ ետեւ մեծագոյն մասով որոշում ստանան։ Սահմանադրութեան այս բացորոշ արամադրութեան առջեւ չեմք կրնար ուրիշ կերպիւ վարուիլ. եթէ ասկէց տարբեր զարման մը կայ, մեք չնորձակալ կ'ըլլամք զայն ցուցնողին։ Ըստ իս ասոր զարմանն ուրիշ տեղ վնասուիլ է. եւ կրնամ ցուցնել այնպիսի երեսփոխաններ որ, այսօր ժողովոյս ԽՍ. նիստն է շարունակութեն նստի եկած են. ըսել կ'ուզեմ որ ասօր զարմանը նոյն իսկ ժողովրդեան ընտրութեան մէջն է. ժողովորդը պարտի ընտրելու այնպիսի երեսփոխաններ որք իրենց պարտքը կը ձանչեն, եւ չընտրել այնպիսիներ որք անտարբեր կը կենան իրենց պարտոց կատարման յանձնարարաւ յայտանց մտնալ։

Յ. ԵՐԵՄԻԱ ՇՊԱ. — Արքայան Նախագահ կը արտնայի եւ իրաւունք տնիւ վասն զի թէ եւ ժողովներն իրեն գործակից են. կ'ենք նոցա կը նախագահէ. բայց չպատանդամ ժողովները կը մոռցուին եւ Պատրիարքը պատասխանատու հանցեցելով անկէ կ'անխտաբն անեն զորոց կ'անտարբեր. Գաղղաքական ժողով այսօր իր հրաժարականը պիտի մատուցանէ. իսկ Արքայան Պատրիարք կ'ըսէ թէ՛ խնդիրները զիգուրեցան ո՛վ պիտի պատասխանէ. Սահմանադրութիւնը կը օրսանայրէ որ Ա. Պատրիարքը պատասխանատուութիւնն իւր վրայ առնելով գործէ։ Եթէ Գաղղ. ժողով չկայ, կրնա կայ արդէն թող Արքայան Պատրիարքը պատասխանատուութիւնն իւր վրայ առնելով գործէ եւ չեկած թղթերն անպատասխանի չթողու միւս կողմէ Գաղ. ժողովոյ հրաժարականն որ

պիտի կարդայուի այսօր, ամենէն առջի խնդիրն ընեմք եւ նոր ընտրութեան սկիզբը եւ կամ թէ արդեմութիւնն ասիմք որ հրաժարեալ Քաղ. ժողովը չարեւաակէ մինչեւ որ նորն ընտրուի։

ԵՒՆՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՅԹ. — Կարծեմ թէ մեր ընկերէն խոսորեցանք. կը դանդաւորեմ մեծագոյն մաս չըլլալուն համար. որ թէ եւ իրաւագիրէ վրասն զի մեծագոյն մաս չըլլալը կը կաշկանդէ մեր քաղ. ժողովը. բայց պէտք է լիջել նաեւ որ ժողովը որոշուել մ'ըրած է ասկէ առաջ այն է որոշեալ ժամանակին ատենն քանալ եւ որոշումները մեծագոյն մասին վերապահել. կ'առաջարկեմ նաեւ թէ որոշում տալու միջոցին մեծագոյն մաս ներկայ չգտնուիր. այն ալ զան խնդիր մէջ. ժողովը կ'ործառութեամբ քայլ առ քայլ յառաջ կ'երթայ. անոյն քայլն ըրած եմք արդէն Սահմանադրութեան աջն յօդուածոյն գրած արդեւրին զէ՛ք որ կ'ըսէ թէ մեծագոյն մասի ներկայութեան ատենն քաղութիւնը ընդ. ժողովն արիւթիւնն ժրբաւ այս արդեւրը վերցնելով կրնանք ուրիշ մ'աղ ընել. այն է որոշել որ ներկայ եղող երեսփոխաններով ատենն քաղութեւ օրուան խնդիրները չ'ընտրեն. բայց ասոր համար դեռ ժամանակ կայ եւ այսօրուան գործ չէ. ուստի կ'առաջարկեմ որ այս խնդիրն ուրիշ առթի մնայ եւ Քաղ. ժողովոյ հրաժարման խնդիրը ձեռք առնուի, որ արդէն իւր տեղեկագրին նախարանք պատրաստած է եւ կ'սպասէ որ առաջին խօսքն իրեն արուի։

Մէկ քանի երեսփոխանք Եուսուֆեան էֆէնտիի ձայնակցելով, ժողովը միաձայն հաստատութեամբ որոշեց լսել Քաղ. ժողովոյ տեղեկագրոյն նախարան յայտագրին ընթերցումը։



ՀՐԱԺԱՐՈՒՄՆ ԱԶԳ. ՎԱՐՉՈՒԹԵԱՆ ՔԱՂ. ԺՈՂՈՎՈՅ

Եուսուֆեան էֆէնտի, յանուն Քաղ. ժողովոյ, կարդաց հետեւեալ յայտագիրը.

Երեսփոխան էֆէնտիներ.

Ազգային Վարչ. Քաղ. ժողովս իւր պաշտօնաւարութեան Նախնիքաց 1870-71 տարւոյն գործողութեանց համարատուութեան տեղեկագիրը մատուցանելէ ետեւ, կը փութայ այժմանց

եալ սահմանադրական տարւոյ (1871-72) գործողութեանց համարատուութիւնն այս տեղեկագրով պատկառելի Ատենիք ներկայացնել. Գայնել է թէ սոյն տեղեկագիրը 1871 մայիս ամսոց սկիզբէն մինչեւ 1872 անգրիկ վերջը ամբողջ տարւան մը մէջ Քաղ. ժողովոյ ըրած 63 նիստերուն գործողութեանց բովանդակութիւնը կը պարտնակեալ ըստ պատկառելիութեան տեղեկագրին. Եւ սոյն մայիս ամսոյ մէջ Քաղաքական Ժողովս իւր անցեալ տարւան համարատուութեան վիճոցին հրաժարականն ալ թէ եւ մատուցած էր սակայն պատկառելի Ատենիք կողմէն չընդունուելով երբ մինչեւ ի վերջոյն Երեսփոխան Սահմանադրութեան իւր պաշտօնը շարունակել հրաւիրուեցաւ. Ժողովս չկրցաւ այդ հրաւիրը մերժել եւ իւր վերապահութեանը մասին պատշաճ զատած վտփոխութիւններն ընելէ ետեւ յանձն առաւ իւր պաշտօնը արդի միւս շարունակել. Պարտք կը համարուիք ուրեմն նախ եւ յառաջ Քաղ. ժողովոյս վերջին շրջանին մէջ ներկայացած բոլոր խնդրոց վրայ վիճակագրական տեղեկութիւն մը տալ.

Նիստատան տուժարներուն մէջ արձանագրուած ընդհանուր խնդրոց թիւն է 1432, որ հետեւեալ կերպիւ կը բաժնուի.

Գաւառական խնդիր	891
Տեղական	398
Մասնաւոր	143
Ընդամենը	1432
Պատրիարքարանի Հայերէն թղթակցութեան թիւն է	849
Տաճկերէն թղթակցութիւն	150
Թագրիր	400
Շամաղիք	127
Վճնաղիրք	45
Համագումար	392
Ընդամենը	1244

Ինչպէս որ յայտնի է Վարչութեան ըրած բազմաթիւ տնօրէնութեանց մէջէն այն խնդիրները միայն կ'ամփոփուին, պատկառելի Ատենիք ներկայացած տեղեկագրին մէջ, որ շատ կամ քիչ կարեւորութիւն կամ ազդեցութիւն կրնան ունենալ ազգային գործոց վրայ, չորս գլխաւոր մասանց բաժնուած, որք են Վարչական, Հանրական, Գաւառական եւ Մասնաւոր։

ուր: Նոյնպէս եւ Ք. Գրան մատուցուած թագրիրներուն եւ դանական պաշտօնատարաց հետ եղած թղթակցութեանց կարեւորագոյնները:

Երեսփոխան էֆէնտիններ, տեղեկագրոյս հրատարակութեանէն ետեւ, պիտի կարենաք վերահասու ըլլալ թէ՛ ժողովս խզի մտօք ջանացած է իրեն ներկայացած բոլոր խնդիրներն Ազգին հանրական շահուց համաձայն կարդադրելու աշխատի: զերծ որ եւ ինչ անձնական նկատմունքէ, հաւատարիմ մնալով միշտ այն սկզբուն, որ իւր պաշտօնավարութեան առաջին օրը հրատարակած էր, թէ Սահմանադրութեան ոգւոյն եւ օգտուէտ սկզբունց միայն պիտի հետեւէր եւ ոչ թէ տառական գործադրութեանը:

Ուրեմն ներեցէ՛ք մեզ ըսել թէ՛ Քաղաքական ժողովս իրնս բարեբաղդ գտնուեցաւ Ասեն. Սրբազան Պատրիարք Հօր աջակցութեամբը Սահմանադրական Վարչութեանց սկզբունքը Ազգին ընտելացնելու:

Վարչութեան տեղեկագրին պէտք չունիք, Երեսփոխան էֆէնտիններ, իմանալու համար թէ որպիսի փափուկ խնդիրներ անօրինուեցան եւ ոմանք ալ ընդրովին լուծուեցան Ազգին օգտին եւ իրական շահուցն համաձայն, չնորհիւ վիճարանութեան ազատութեանը, զոր ոմանք թէպէտ եւ դատապարտեցին, բայց մեր կարծիքն այն է թէ՛ առանց այս միջոցին անհնար էր այն արդիւնքը ձեռք բերել, որով Ազգը խողաղեցաւ եւ սկսաւ Սահմանադրական Վարչութեան օգուտները վայելիլ:

Ուստի իւր փորձառութեամբը կը համարձակի յանձնարարել պատկառելի Ատենիդ որ բարեհաճի ծայրայեղ սկզբունքներէն միշտ խորչելով այնպիսի անօրէնութիւն մ'ընել որ, կարելի ըլլայ արդի Վարչութեան յաջորդները կարելի եղածին չափ քիչ օրուան մէջ բազմեցնել Քաղաքական ժողովոյ սեղանին վրայ:

Քաղաքական ժողովս Ազգային Վարչութեան կնճռալից օրերուն մէջ պաշտօնի կոչուած, գործութեամբ սրտի կը տեսնէ իւր պարտաւորութիւններն անթերի կատարած ըլլալը եւ բարեբաղդ կը համարի, իւր օրովն այնպիսի մեծամեծ խնդիրներ յուղուելէ ետեւ, Ազգը խողաղութեան վիճակի մէջ թողուն համար, մինչդեռ Տահկաստանի բոլոր միւս ոչ Մահմետական հասարակութիւնները վրդովեալ են:

Իրաւէ որ գաւառական հարստահարութեանց

եւ կիլիկիոյ կաթուղիկոսութեան խնդիրները պահ մը Ազգին մէջ յուղման տեղի տուին, սակայն չնորհիւ պատկառելի Ատենիդ խոհեմական անօրէնութեանց, ճշմարտութիւնը շուտով երեւան ելնելով, բոլոր յուղեալ մտքերը հանգարտեցան, եւ անտարակոյս ետք թէ՛ Ա.Ե.Ն. Սուլթանին արդարատէր կառավարութիւնը եւ Այրարատեան Մայր Աթոռոյ Ա.Ե.Ն. Գահակալն այս խնդրոց ծանրութիւնը լաւ կ'ընելով այնպիսի կարգադրութիւններ պիտի ընեն որով կառավարութեան Ազգին եւ Մայր Աթոռոյ շահերը պիտի կարենան համաձայնիլ:

Քաղաքական ժողովս եթէ ցաւ մ'ունի, իւր հրաժարած վայրկեանին, միմիայն կ'ընելան խորհրդոյ ծրագիրը գործադրութեան մէջ կարենալ զրամ չըլլալն է, ստոր ալ պատճառն յայտնի է թէ՛ յիշեալ ծրագիրը, որ անցեալ տարի պատկառելի ժողովոյդ ներկայացած է, այնպիսի ամենակարեւոր առաջարկութիւններ կը պարունակէր որոց ընդունելութեան կամ մերժման որոշումը Երեսփոխանական ժողովոյ կողմանէ չտրուած դժուարին էր կրթական խորհուրդը վերակազմել եւ անոր բանելիք ընթացքը նախադժեշտ: Կը յուսամք որ այս կարեւոր պակասը կը լեցուի մեր յաջորդաց օրովն, եւ ազգ. դաստիարակութեան խնդիրն իւր կարեւոր ուղղութիւնը կատանայ:

Ընթերցման միջոցին Գ. Ատենապետ կ. Քարակէօզեան էֆ. կը ներկայանայ եւ իւր պաշտօնին գլուխը կ'անցնի:

ՕՍԿԱՆԵԱՆ Խ. ԷՑ. — Քաղ. ժողովոյ տեղեկագիրը կարգացուեցաւ, լսեցինք. կ'առաջարկեմ որ ըստ օրինի ընդունուի:

Ատենապետ էֆ. կը յիշեցնէ որ՝ դեռ ժողովոյն մեծագոյն մասը գոյացած չըլլալով ըստ օրինի ընդունելութիւն չկրնար կատարուիլ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Օսկանեան էֆէնտի առաջարկութիւնը չհասկցայ. ի՞նչ է ընդունելութիւնը: Քաղաքական ժողովոյ տեղեկագիրը սուպերութեամբ իւրոյս ելնելէ ետեւ կրնամք զայն ընդունիլ կամ ո՛չ. իսկ եթէ չնորհակալութեան վրայ է իր առաջարկը, այո՛, կրնգունիմք, որովհետեւ Քաղ. ժողովը տարի մը եւս իւր պաշտօնը շարունակելով պաշտօնավարութեան երկամնայ չըջնը լրացուց եւ ըստ

օրինի իւր հրաժարականը կը մատուցանէ: Արդ՝ բնականաբար նոր Քաղ. ժողովի մը կազմութեան խնդիրը բացուած է. եթէ ժողովը կուզէ, անցնի՛ք անմիջապէս ընտրութեան խնդրոյն:

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՑ. — Այո՛, Քաղ. ժողովոյ հրաժարականը վիճարանութեան ներքեւ չընկնիր, որովհետեւ արդէն անցեալ տարի Քաղ. ժողովը սնդեց եւ պայման դրաւ որ՝ այլ եւս տարի մը միայն կրնայ շարունակել իւր պաշտօնը. հետեւապէս անմիջական խնդիրը յաջորդ Քաղ. ժողովոյն ընտրութիւնն է:

ՊԷԿԵԱՆ Թ. ԷՑ. — Քաղ. ժողովոյ հրաժարականը լմեցած խնդիր մ'է ըսաւ փախաղեան էֆ. եւ Եռուստիան էֆ. զայն կրկնեց եւ յաւելցուց թէ՛ անցեալ տարի պայման դրած էր Քաղ. ժողովն այլ եւս տարի մը միայն շարունակել իւր պաշտօնը. սխալ է. Քաղ. ժողովը թէ՛ եւ այդ պայմանն առաջարկեց անցեալ տարի, բայց Ընդ. ժողովը չընդունեց եւ յանձնարարեց շարունակել իւր պաշտօնը մինչեւ Սահմանադրութեան վերաքննութեան աւարտումը: Գծադրգարար նոյն օրէն ի վեր վերաքննութեան խօսք ընաւ չեղաւ, թերեւս այս ընթացքով 40 տարիէն ալ վերաքննութիւնը չաւարտի, բայց ասի տարբեր խնդիր մ'է. ես կը պնդեմ որ Ընդ. ժողովը չընդունեց Քաղ. ժողովոյ համար մէջ բերուած վերոյիշեալ պայմանը, ուստի եւ չեմ կրնար իրր ըսկըդուելք ընդունիլ թէ՛ Քաղ. ժողովոյ հրաժարականը վիճարանելի խնդիր մը չէ:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՑ. — Պէկեան էֆ. կը սխալի երբ կըսէ թէ՛ Ընդ. ժողովը չընդունեց անցեալ տարի Քաղ. ժողովոյ պայմանաւ իւր պաշտօնը շարունակելու յանձնառու լինիլը: Արդէն Ս. Նախագահը համոզուած է որ Քաղ. ժողովը չկրնար յետ այսորիկ շարունակել իւր պաշտօնը եւ թէ՛ նոր ընտրութիւն ընել ստիպողական հարկ մ'եղած է. սնոր համար այս խնդիրը բերաւ ժողովին:

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ Տ. ԷՑ. — (Յանձն Քաղ. ժողովոյ) կը հաստատեմ փախաղեան էֆ. ի խօսքը. ըստոյդ է որ անցեալ տարի Ընդ. ժողովը լի վստահութեամբ յանձնարարեց Քաղ. ժողովոյ մինչեւ ցաւարտ վերաքննութեան շարունակել իւր պաշտօնը, բայց Քաղ. ժողովը տարի մը միայն շարունակել յանձնառու եղաւ, մինչեւ ի լրումն սահմանադրական տարեգլխոյ. եւ այսուհետեւ ալ չպիտի կրնայ շարունակել եթէ

պատկառելի ժողովոյդ կողմէ կրկին առաջարկութիւն եւս լինի. ուստի այս մասին երկարաբանելն աւելորդ աշխատութիւն մ'է եւ ի դուր մամանակ վատնել. հետեւապէս կատաշարկեմ որ պատկառելի ժողովը անմիջապէս մեր յաջորդաց ընտրութեան խնդրովն զբաղի: ՊԷԿԵԱՆ Թ. ԷՑ. — Ձեմ ուղեր օդին մէջէն խօսքեր բերել ի պատասխան փախաղեան եւ Եռուստիան էֆէնտիններուն. անցեալ տարուան ատենադրութիւնը՝ եթէ Գիււանը հաճի կարգով՝ իմ ըսածներս պիտի ստուգեն: Եսկ գալով Եռուստիան էֆ. ի այն յայտարարութեան թէ՛ Քաղ. ժողովը չպիտի հաճի վերըստին յանձնառու լինիլ, այդ մասին իրենք ազատ են. բայց ես նորէն կըսեմ, եթէ կան երեսփոխաններ՝ որք Քաղ. ժողովը պաշտպանել կուղեն, պէտք է որ խօսին:

Այս միջոցին Ատենապետ էֆ. կաղաքարէ թէ մեծագոյն մաս դոյացած է եւ թէ ժողովը կը պարտի ըստ օրինի խնդրոց կարգին անցնիլ:

ՕՍԿԱՆԵԱՆ Խ. ԷՑ. — Ըստ որում Քաղ. ժողովոյ հրաժարման յայտագիրը կարգացուեցաւ, կատաշարկեմ որ նախ այս խնդիրը վերջանայ եւ ապա ուրիշ խնդրոյ ձեռնարկուի:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Խնդրոց կարգին մէջ թէ եւ ուրիշ երկու խնդիրք կան Քաղ. ժողովոյ հրաժարման խնդիրն արդէն սկսուած է, լաւ կըլլայ շարունակել եւ զայն վերջացնելէ ետեւ օրուան կարգին անցնիլ: Ուստի ի տեղեկութիւն նորեկ երեսփոխանաց կը ծանուցանեմ որ Քաղ. ժողովը հրաժարած է եւ թէ այս հրաժարականը քուէի պիտի դնեմ:

Չայս ըսելով Ատենապետ էֆ. անմիջապէս Քաղ. ժողովոյ հրաժարումը քուէի կը դնէ եւ ժողովը կընդունի զայն:

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՑ. — Հրաժարեալ Քաղ. ժողովոյն նախորդ շրջանին համարատուութեան սպեալ տեղեկագրէն ծանօթացած էք արդէն անոր ըրած գործողութեանց եւ Ազգին մատուցած ծառայութեանց. վերջին շրջանին համարատուութեան տեղեկագիրն ալ հրատարակուելէ ետեւ նոյն շրջանին մէջ ըրածները պիտի իմանաք. այժմ Գիււանը պատշաճ կը դատի չնորհակալութեան քուէ առաջարկել Քաղ.

Ժողովոյ համար :

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՅ. — Վերջին տեղեկագիրն ալ պէտք է հրատարակուի եւ զայն կարգովէ ետեւ շնորհակալութեան քուէ տրուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Պէկեան էֆ. ի գիտողութեամբն հանգերձ դարձեալ ժողովոյն կը դիմեմ եւ կը հրատարակեմ որ, եթէ կը հաճի, ձեռնամբարձ քուէիւ քուր շնորհակալութիւնը յայտնէ :

Ժողովը՝ շնորհակալութեան քուէ տալով իւր կատարեալ գոհունակութիւնը կը յայտնէ Քաղ. ժողովոյ վրայ :

S. ԱՄԲՐՈՍԻՈՍ ՎՐԴ. — Ասի քաղաքավարական պարտք մ'էր զոր կատարեց ժողովն. կառավարկեմ որ տեղեկագրոյն հրատարակմանէն ետեւ կրկին իրական շնորհակալութիւն մը յայտնուի անկեղծօրէն :

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՅ. — Քաղաքավարութեան քուէին եւ ալ կը մասնակցիմ, որովհետեւ սոսկ քաղաքավարական է եղեր շնորհակալութիւնը, ինչպէս որ S. Ամբրոսիոս Վրդ. ըսաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Յիշեալ Վարդապետին առանձին կարծիքն է այդ, եւ ոչ ժողովոյն :

ԵՈՒՍՈՒՅԵԱՆ S. ԷՅ. — (Արեւ-արեւելք Քաղ. ժողովն) Յանուն պաշտօնակցացս կը յայտարարեմ որ Քաղ. ժողովն առանց երեսօտիսանական ժողովոյ աջակցութեան բան մը կարող չէր ընել. ինչ որ կը ցած է ընել՝ զայն ժողովոյդ աջակցութեան կը պարտի, եւ այս մասին իւր շնորհակալութիւնը յայտնելէ ետեւ կը մտախոհեմ նոյն աջակցութիւնը նաեւ իւր յաջորդաց համար :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Պարտ կը համարիմ յիշեցընել որ Քաղ. ժողովոյ հրատարակման հետ լնդհ. ժողովոյ Դիւանին հրատարակման ալ պայմանուած է արդէն. ուստի ընտրութեան միջոցին երկուքին համար մէկանց պէտք է որոշուի ընել :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Ատենապետ էֆէնտի, պահ մ'առաջ երբ մեծագոյն մաս գոյացած լինելը յայտնեցիք, ըսիք նաեւ որ՝ թէ եւ ուրիշ խնդիրներ կան նախագաս, բայց Քաղ. ժողովոյ հրատարակման խնդիրն արդէն ձեռք առնուած ըլլալուն համար պէտք է առաջ զայն լրմընցնել. ուստի կը խնդրեմ որ Դիւանի ընտրութիւնն ուրիշ նստի մը թողուք, որպէս զի այսօր Քաղ. ժողովոյ ընտրութեան գործն աւարտեմք, որ ամենէն ստիպողականն է :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Թերեւս երկարի Քաղ. ժողովոյ ընտրութեան խնդիրը, Ձեր կարծեացն հակառակ. ուստի Դիւանի ընտրութիւնը պէտք է կատարուի լնդհ. ժողովոյ Դիւանին հրատարակմանն որ ասկէ առաջ մատուցուած էր ժողովոյս եւ Մայիսի ձգուած՝ կը խնդրեմ որ ընտրուած լինին այսօր որոշուի : Այս նկատմամբ պէտք է խնդրոց կարգին դաճնամք, եւ յետոյ անցնիմք Քաղ. ժողովոյ ընտրութեան եղանակի մեծ խնդրոյն :

Ժողովն Ատենապետ էֆ. ի առաջարկութեան համաձայն կը հաւանի խնդրոց կարգին հետեւի :

ՎԱԼԵՐԱՅՈՒՄՆ ՆՈՐԸՆՏԻՐ ԵՐԵՍՓՈՒԱՆԱՑ

Ատենապետ էֆ. կը կարգայ Գործ. Յանձնաժողովոյ կողմէ մատուցուած հետեւեալ տեղեկագիրը :

Ատենապետիւ Սրբազան Պատրիարք Հայր Նախագահ Ազգ. Ընդհ. ժողովոյ :

Գուրու-Չէյմէ եւ միացեալ թաղից հրատարեալ երեսօտիսանին տեղ նորոգ ընտրութիւնը կատարուեցաւ ի 26 մարտի, եւ 76 ընտրողներէն 24 ի մասնակցութեամբն երեսօտիսան ընտրուեցաւ :

Գարրիէլ էֆ. Գ. Կիւմրիչճեան, 48 քուէով :

Պալատու թաղին հրատարեալ մէկ երեսօտիսանին տեղ նորոգ ընտրութիւնը կատարուեցաւ ի 26 մարտի, եւ 38 քուէարկուներէն 34 ինքուէով երեսօտիսան ընտրուեցաւ :

Յովհաննէս էֆ. Կրճիկեան :

Նիկոմիդիոյ Գեր. Առաջնորդին գրութեամբը կը տեղեկանամք թէ՛ ի 26 մարտի, վիճակին Քառասական Ընդհ. ժողովը հրատարեալ երեսօտիսանին տեղ նորոգ ընտրութիւնը կատարեց եւ երեսօտիսան ընտրեց է :

Յարգիս էֆ. Մկրեան :

Միջադիւղի թաղին հրատարեալ մէկ երեսօտիսանին տեղ նորոգ ընտրութիւնը կատարուեցաւ ի 18 մարտի, եւ 62 քուէարկուներուն 34 քուէովը երեսօտիսան ընտրուեցաւ :

Յակոբ էֆ. Կոստանդեան :

Ակնայ Գեր. Առաջնորդին մարտ 23 ի գրութեամբը կը տեղեկանամք թէ՛ վիճակին առ ժամանակեայ Ընդհ. ժողովը հրատարեալ երեսօտիսանին տեղ նորոգ ընտրութիւնը կատարեց եւ երեսօտիսան ընտրեց է :

Վիտանին տեղ նորոգ ընտրութիւնը կատարեց եւ երեսօտիսան ընտրեց է :


Պետրոս էֆ. Պ. Մխարեան :

Աոյն ընտրութեանց օրինաւորութիւնը հաստատելով պատկանելի ժողովոյդ կը ներկայացընեմք ՚ի վաւերացումն :

Ի ԳՂՏՅ ՍԱՀՅ ԳՐԷՅ ԵՆՅԵՅՅՅՅՅ
ՎՈՒՆ ԱՐԷՆՊՊԵՒՆ ԱՐԷՆՊԵՒՆ
ՂՂՂՂՂ ՂՂՂՂՂ ՂՂՂՂՂՂՂՂՂ ՂՂՂՂՂՂՂՂՂ

3 Մայիս 1872 Ղալաթիա

Ատենապետ էֆ. կը հրաւիրէ զերեսօտիսանը որ ընթերցեալ տեղեկագրոյն վրայ գիտողութիւնն եթէ ունին՝ ընեն, եւ տեսնելով որ ոչ ոք գիտողութիւնն կը յայտնէ, տեղեկագիրը քուէի կը դնէ : ժողովն ընդհանուր հաւանութեամբ յիշեալ հինգ նոր երեսօտիսանաց ընտրութիւնը կը վաւերացնէ :



ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ՆՈՐՈՂ ԴԻՒԱՆԻ ԸՆԴՀ.

S. ՄԱՏԹԷՈՍ ՎՐԴ. — Թէպէտ օրուան խընդրոց մէջ կարգն Ընդհ. ժողովոյ նորոգ Դիւանին ընտրութեան խնդիրն է, բայց ինչպէս որ պահ մ'առաջ ըսուեցաւ, Քաղ. ժողովոյ նոր ընտրութիւնը քան զայլ ամեն խնդիր ստիպողական ըլլալով, պէտք է որ անմիջապէս նոյն ընտրութեան ձեռնարկուի, որպէս զի Ազգին ընթացիկ գործերն երեսի վրայ չմնան :

ՂԱՋԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Եթէ հրատարեալ Քաղ. ժողովը պիտի շարունակէ մինչեւ իւր յաջորդին ընտրութիւնը, կրնամք այժմէն նորոգ Դիւանի ընտրութեան ձեռնարկել. բայց թէ որ Քաղ. ժողովը չպիտի շարունակէ, ինչպէս ըսուեցաւ, կարծեմ Դիւանին անդամոց խղճին ալ հակառակ է նորոգ Դիւանի ընտրութեան խնդրոյն վրայ պնդել :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Դիւանին ընտրութիւնն ինչպէս նաեւ Քաղ. ժողովինը՝ դժուարութիւն մը չունի երբէք, երկուքինն ալ մէկանց կրնայ կատարուիլ որոշեալ օր մը, եթէ ժողովը քարհնածի չուտով որոշել ընտրութեան եղանակը :

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՅ. — Դեռ Դիւանին հրատարակման քուէիւ չորոշուեցաւ, այդ հրատարակմանը կրնամք քուէարկել այսօր, իսկ նորոգ

ընտրութեան կատարումը պէտք է ձգել Քաղ. ժողովոյ ընտրութեանէն յետոյ :

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՅ. — Դիւանը սխալ քայլ մը առած կը տեսնեմ : Ընդհ. ժողովը լրագրաց միջոցաւ հրաւիր մ'ընդունած է Ս. Պատրիարքէն եւ խնդրոց կարգ մը Դիւանին կողմէն, որուն մէջ Քաղ. ժողովոյ հրատարակմանն առաջ նորոգ Դիւանի ընտրութիւնն զրուած է : Եթէ Դիւանն իր ընտրութեան վրայ պիտի պնդէր, ինչու համար կանխաւ չպնդեց եւ նախ Քաղ. ժողովոյ հրատարակման որոշել տուաւ :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Խնդիրը սխալ ըմբռնման եւ թիւր մեկնութեան ներքեւ ինկաւ : Ահա անոր պարզ վիճակը : Դիւանը կը պնդէ որ ժողովը գոնէ իւր հրատարակմանն ընդունուած լինելն որոշէ այսօր : Այնուհետեւ ընտրութեան գործը շատ զիւրիւն է, կրնայ թէ այսօր կատարուի եւ թէ յառաջիկայ շաբթու մէջ որոշեալ օր մը, ինչպէս պահ մի յառաջ բացատրեց Ատենապետ էֆէնտին :

ՊԵՏԵԱՆ Թ. ԷՅ. — Ատենապետ էֆ. պահ մ'առաջ ըսաւ թէ Քաղ. ժողովոյ ընտրութեան խնդիրը կրնայ քանի մը նիստեր տեսել. եւ որովհետեւ Դիւանը զինքն հրատարեալ կը համարի, Ե՛վ պիտի պատասխանատու ըլլայ ժողովոյն, կրնայ արդեօք իւր վրայ պատասխանատուութիւն առնուի հրատարեալ Դիւանը. ուստի կառավարկեմ սր Քաղ. ժողովոյ ընտրութեան խնդիրը վերջանալէ ետեւ Դիւանին հրատարակման խնդիրը նկատողութեան առնուի :

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՅ. — Կը տեսնեմ որ՝ երեսօտիսան էֆէնտիներէն ոմանք կը խռովին, կը վարանին եւ երկիւղ կը կրեն որպէս թէ զիւսանական գործողութիւնք երեսի վրայ պիտի մնան, ինչպէս նաեւ Քաղ. ժողովոյ գործերը Միթէ այնքան անհամբերութիւն պիտի ունենան Քաղ. ժողովոյ մեծ անդամներն որ իրենց յաջորդներուն ընտրութիւնը չկատարուած իրենց պաշտօնը լքանեն. — չեմ կարծեր ՚իսկ Դիւանին կողմէն կը վստահացնեմ զժողովն որ երբէք չչիտի անոր հրատարակման ընդունելու առթիւ. մինչեւ որ նոր Դիւանն ընտրուի արդի Դիւանն՝ որչափ կարելի է իւր պարտքը կատարել կը ջանայ :

Այս վստահացուցիչ յայտարարութիւնն ընելէ ետեւ Ատենապետ էֆ. Դիւանին հրատարակման թէ եւ քուէի դնելու փորձ մ'ըրաչ, բայց քուէարկութիւնն որոշ արդիւնք չունեցաւ :

ԱՍԵՆԱՊԵՏ Է. Թ. — Չարմանալի է որ այս պարզ և մեկին խնդիրը այսչափ չփոթաթխան մէջ խնդրէ . եթէ այդչափ ծանր կը թուի ժողովոյ Գլխանին հրաժարականն ընդունել, կըրնամք քանի մի որ ետ թողուլ զայն, և անցնել անսխալապէս Քաղ. ժողովոյ ընտրութեան և զանակի խնդրոյն :

ՆՈՐՈՂ ԸՆՏՐՈՒԹԻՒՆ ԱԶԳ. ՎԱՐՉ. ՔԱՂ. ԺՈՂՈՎՈՅ .

S. ՄԱՏԹԷՆՍ ՎՐԾ. — Քաղ. ժողովոյ ընտրութեան եղանակին վրայ երկար վիճաբանելու հարկ չկայ : Ինչպէս որ կրօն. ժողովոյ ընտրութեան մասին առաջարկուած փոփոխութիւնները վերաքննութեան վերադարձուելով Սահմանադրութեան արամադրութեանց համաձայն ընտրութիւն եղաւ . այնպէս ալ Քաղ. ժողովոյ ընտրութիւնը սահմանադրապէս կատարել պէտք է : Թէ և ասկէ առաջ դժուարութիւններ տեղի ունեցած են սահմանադրական եղանակաւ կատարուած ընտրութեանց մէջ, բայց այդ դժուարութեանց պատճառներն այսօր վերացած են . զխաւորապէս կեդր. սնուակը դրամական նեղութեան մէջէր ասկէ յառաջ, որմէ այժմ ազատած է և Քաղ. ժողովոյ խորհրդարանէն ներս առնելիքի համար մարդ չմանէր :

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. Է. Թ. — Կարծեմ Քաղ. ժողովոյ ընտրութեան մասին Սահմանադրութեան այն յօդուածը չափաւորուած է արդէն վերաքննութեամբ . ուստի կառաջարկեմ որ ժողովս օրինակ բռնելով հրաժարեալ Քաղ. ժողովոյ ընտրութիւնը, վերստին արտօնութիւն տայ Ս. Պատրիարքին, ինքեին ընտրելու նոր Քաղ. ժողովը :

ՕՍԿԱՆԾԱՆ Խ. Է. Թ. — Կարծեմ չեմ սխալիր երբ ըսեմ թէ Քաղ. ժողով ըսուած մարմինն օժանդակ գործիք մ'է գործադրին ձեռքը . գործադիրն ուղղակի պատասխանատու եմք ըրեր Ընդհ. ժողովին, կրնայ ըլլալ որ իր օժանդակներն իրմ կախում չունենան և իրեն չհնազանդին . այնպիսի հակասութիւն մ'է այն որ անգործութեան կը տանի մեր Վարչութիւնը : Այս հակասութեան առաջն առնելու համար կառաջարկեմ նախ արտօնութիւն տալ գործադիր Նախագահին որ ընտրելիաց ցանկ մը ներկայացնէ և ժողովոյս հաւանութիւնն ստանա-

լէ ետեւ նոյն ցանկին մէջէն ընտրէ իրեն գործակիցները : Երկրորդ՝ բոս որում փորձառութեամբ տեսնուած է որ համարուած 20 անձինք գանել և անոնց մեծ մասը մէկ տեղ բերել ու գործել դժուարին է : կառաջարկեմ որ այս թիւն ալ չափաւորուի և Քաղ. ժողովը 20 էն շատ պակաս անդամներէ բաղկանայ :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. Է. Թ. — Կառարկուի թէ Քաղ. ժողովն եթէ 20 հոգիէ բաղկանայ, զըժուարին է անոնց մեծ մասը մէկ տեղ բերել որ գործեն : Այս առարկութիւնն անհիմն կը գըտնեմ . որովհետեւ Քաղ. ժողովը գործելու համար եթէ կանոն մը չունենա, չկրնար գործ մէ յառաջ տանլ : անդամոց թիւը 20 ըլլայ՝ քիչ ալ ըլլայ՝ հոգ չէ, պէտք է որ գործերն իր մէջ բաժնուին : Աւստի ինչպէս որ Սահմանադրութիւնը ցուցըցած է, կառաջարկեմ որ օրէնքը յարգուի և ըստ այնմ ընտրուի : Քաղով Սականեան էֆէնտիի այն խօսքին, որով Սըրբազան Պատրիարքին գործադիր անուն տուաւ, կը յայտնեմ թէ ոչ միայն գործադիր է : այլ և համարաւու և միանգամայն համարատու Նախագահ է այս ժողովին :

ՊԷԿԵԱՆ Թ. Է. Թ. — Քաղ. ժողովոյ ընտրութեան մասին զանազան կարծիքներ յայտնուեցան . ոմանք ըստ տառին Սահմանադրութեան կ'ուզեն այդ ընտրութիւնը կատարել, այս ըսողներն անոնք են որ ժամանակաւ նոյն իսկ ասոր հակառակը պնդեցին : Ոմանք ալ նոր առաջարկութիւն մը կրնեն, այն է՝ Ս. Պատրիարքը ցանկ մը բերէ և ինք ընտրէ Քաղ. ժողովոյ անդամները : Չայս առաջարկողներուն մէջ անոնք ալ կան որ ժամանակ մը զիկատարութիւն կանուանէին այս տեսակ զրութիւն մը, իսկ Սականեան էֆէնտիին այն կարծիքը թէ Քաղ. ժողովն օժանդակ գործիք մ'է Պատրիարքին ձեռքը, բոլորովին նոր է և անընդունելի . ընդհակառակն Վարչութեան ժողովները կորոչեն և Նախագահը գործադիր է նոցին որոշմանց : Այս նորամուտ կարծիքն հերքելէս ետեւ կանցնիմ իմ բուն կարծիքս յայտնել այս մասին, և նախ կըսեմ թէ այս խնդրոյն լուծու մը խիստ պարզ է . փորձով տեսնուած է որ Քաղ. ժողովոյ համար 20 հոգիի ընտրութիւնն որչափ դժուարութիւններ ունի, այս պատճառաւ է որ ասկէ առաջ 6 հոգիի իջուցած էր Ընդհ. ժողովն . ասոր հակառակը պնդողները փորձոյ վրայ չեն հիմներ իրենց առաջարկութիւնը . պարզ խօսքով 20

թիւը պահպանել ուղեղն ըստ տառին Սահմանադրութեան, մեր քայլերուն վրայ յետս դանձալ ըսել է . փորձեալն կրկին փորձել յիմարութիւն է, կրնէ իմաստունը, ուստի յիմարական փորձեր ընելէ ետ կենամք :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. Է. Թ. — (Ընդդէմ) Յիմարական կանուանէ ժողովականաց խօսքերը . կը բողոքեմ այդ բառին դէմ :

ՊԷԿԵԱՆ Թ. Է. Թ. — Ես ոչ ոք ակնարկեցի : ԱՂԱԲԷԳԵԱՆ Մ. Է. Թ. — Այո, կը վկայեմ որ ակնարկութեան մտօք չըսաւ այն խօսքը :

ՊԷԿԵԱՆ Թ. Է. Թ. — (Ենդդէմ) Պէտք չէ, ըսի, մեր քայլերուն վրայ ետ դառնալ, այլ թիւը չափաւորենք և նոր թիւ մ'որոշենք : Իսկ դաւով ընտրութեան կերպին կառաջարկեմ որ Ընդհ. ժողովն իր իրաւունքն եղած այս ընտրութիւնն ինք կատարէ, ու չաղիր լինելով կարելի եղածին չափ համամիտ անձերէ կազմել Քաղ. ժողովը :

ՓԱՓԱԶԵԱՆ Ս. Է. Թ. — Ի՛նչպըր բերաւ որ Պէկեան էֆ. ի խօսքն իրեն գարձեմք . Էնդդէմն էն էն է ընդդէմ յիմարութիւնն է անցելոյն վրայ գաղափար չունենալը . երբ 2 տարի առաջ 20 թիւը 6 ի իջուց Ընդհ. ժողովն և 6 անդամէ բաղկացեալ Քաղ. ժողով մ'ընտրեց, միայն Ֆրէնկեան Յ. էֆ. ընդունեց և մնացած հինգը հրաժարեցան : Ատենագրութիւնն ի ձեռնին կը հաստատեմ որ Ընդհ. ժողովն ընտրուելով չընդունեցին, իսկ երբ Ս. Պատրիարքն ընտրեց ընդունեցին . ինչ է արդեօք պատճառը : Հիմա ալ եթէ Ընդհ. ժողովն արտօնութիւն տայ Ս. Պատրիարքին՝ 20 անդամէ բաղկացեալ Քաղ. ժողով մ'ընտրելու, հաստատապէս կըսեմ որ 20 հոգի կայ և կ'ընդունին . բայց ինչ է պատճառը որ Ընդհ. ժողովն ընտրուած անհներն չեն ընդունիր . վասն զի պատասխանատուութենէ կը վախնան, վասն զի Ընդհ. ժողովը չէ տուած յատակագիծ մը և չէ ըսած, » ես վիճաբաւ չեմք ժողով մը և զու գործադիր ժողով մ'ես, « ահա յատակագիծդ, գնա՛ գործէ այս յատա « կազմին վրայ » : Բայց ո՛ր է յատակագիծ, չըկայ . անոր համար ամեն մարդ կը քաշուի Քաղ. ժողովն իսկ ստորակարգեալ պաշտօններու հաճութիւն կուտայ : Ապացուցով հաստատեմ ըսածս . Տեսեալական, Թաղական, Տեղական ևն . Խորհրդոց համար շատ մարդ կը գտնես, բայց երբ կարգը Քաղ. ժողովոյն ընտրութեան կուգայ, ամեն մարդ կը վախսի :

վասն զի պատասխանատուութիւն կայ ծայրը : Մի կարծէք որ անհամամտութիւնն է պատճառը . անհամամտութիւնը մեծ խնդրոց վրայ կրնայ ըլլալ, օրինակի համար՝ Պրուսայի առաջնորդական խնդրոյն մէջ, Այվաթեան էֆէնտիին հետ թէ որ ժողովական գտնուիմ, նա ապակեղորնացական եւ կեդրոնացական, չը պիտի կրնամք համաձայնիլ . որովհետեւ նա պիտի ըսէ թէ Պրուսայի Առաջնորդը մեք չը դատեմք, իսկ ես պիտի ըսեմ որ մեք դատեմք : Ենչպէս Սոյ խնդրոյն մէջ Պէկեան էֆէնտիին հետ հակակարծիք եմք, բայց միասին Քաղ. ժողովական կրնամք ըլլալ : Մինչեւ որ մարդ գտնեմք գործելու համար՝ հրաժարողին տեղ նորն ընտրել . այս է մեր ընելիքը : Այս Ընդհ. ժողովը պիտի շարունակեմք, ԽԱ. նիստն է սյսօր . Քաղ. ժողովը չարաթիւն օր մը կամ երկու օր ալ նիստ ընէ բաւական չէ, միայն իւր ներքին գործերուն անդամ չըսեմք, վասն զի Տեսեալական, Աւսումնական և այլ Խորհուրդներէն գրեթէ կուգան, անոնք ալ որոշելու է : Եուսուֆեան էֆ. արդէն փորձով տեսաւ, թող ինք վկայէ . ուստի այս այսպէս չըսելէք, պէտք է որ Վարչութեան ճիւղերն ալ գործեն, ամեն անգամ չըլիմեն Քաղ. ժողովն լաւ եւս է ըսել անոնց թէ գործեցէք և սահմանադրական տարեգլխին համար տուէք Քաղով թուոյ խնդրոյն, ասկէց առաջ 6 ով ընտրուեցաւ Քաղ. ժողովն և այս 6 ը անցեալ տարի 9 ի ելաւ . հարկաւ պէտք մը կար . ըսել է թէ այսօր ալ եթէ 9 հոգի ընտրեմք, վաղը կրնան 3 հոգի ալ ուղել, ինչու որ՝ պէտք է . պիտի ըսեն :

S. ՂԵՒՈՆԻ ՎՐԾ. ՓԻՐՂԱԼԷՄԵԱՆ. — Քաղ. ժողովոյ ընտրութեան մասին մեր առ ձեռն ունեցած Սահմանադրութեան ՅՅԷ յօդուածն այսպէս կը տրամադրէ « Քաղ. ժողովը կը բաղկանայ ազգային գործոց և Տէրութեան օրինաց տեղեակ քսան աշխարհականներէ » :

Տեա՛րք իմ, ևս քսան մարդ չեմ ճանաչեր այս յօդուածոյն պահանջած օրինաց տրամադիր, որ ինչի մտօք կարենամ քուէս տալ . այսու չկարծուի թէ Հայ Ազգին մէջ Քաղ. ժողովոյ հանգամանք և յատկութիւնք ունեցողաց թիւ կը պակսին . քաւ լիցի, ախո՛ս որ ինձ անժանօթ կը մնան անուանք նոցին . եթէ ես մինակ ծանօթ անձանցս քուէ տամ, վերոյիշեալ յօդուածոյն պահանջած թիւը թեւի կը մնայ . յայնժամ երեսփոխանական պար-

տաւորութեանս մէջ կերպով իւրք պարտազանց պիտի գտնուիմ, որ կարող չեղէ քսան արժանաւոր արգասէր՝ գործունեայ եւ միանգամայն մեր բարեխնամ Տէրութեան օրինաց հմուտ եւ տեղեակ անձինք ճարել եւ քուէ տալ : Ինչպէս ես, Երեսփոխան էֆէնտիք, նաեւ ինձ նման շտաբէրն այս ընտրութեան ժամուն պիտի շուարեալ տարակուսի : Իրենց քուէ տալուն վրայ, արժանաւոր մարդ վընտրուելու համար պարագ սեղ յայտմ փոքր միջոցին միտք եւ յուշ հասցնելով պիտի չկարողանան հասնիլ իւրեանց փափաքին, եւ ընտրել այն քսան արժանաւոր անձինքն՝ ինչպէս որ մեր վերաքննելի Սահմանադրութեան 36րդ յօդուած կը պահանջէ :

Ուստի այս անել խորխորատ չանկանելու համար կառավարեմ պատկառելի ժողովոյդ, որ յանձնաժողով մը կազմելով նորընտրելի ֆաղ ժողովոյ համար եռասպատիկ ընտրելեաց ցանկ պատրաստէ եւ Ընդհ. ժողովոյդ բերէ, ինչպէս որ կ'օն. ժողովոյ համար Եկեղեցական Համագումար ժողովը պատրաստեց. յայնմամ իւրաքանչիւր Երեսփոխան զայս ապահովեալ տեսնելով կը փութայ իւր խզի հանդարտութեամբ եւ ներքին համոզմամբ՝ մասնաժողովոյ բերած ցանկի մէջէն ֆաղ ժողովոյ անդամքն ընտրել :

ՕՍԿԱՆԵԱՆ Խ. ԷՅ. — Իմ առաջարկութեանս վրայ եղած խօսքերէն կը տեսնեմ որ խնդիրը շփոթութեան մէջ ինկած է, առաջարկութիւնն ըստ երկու մասերէ կը բաղկանար. մէկն էր ֆաղ ժողովոյ ընտրութիւնը Ս. Նախագահին յանձնել, եւ միւսը՝ անդամոց թիւը չափաւորել :

Մինչեւ ցարդ միայն թուոյն վրայ խօսք եղաւ, բայց ընտրութեան մասին կարծիք մը չը յայտնուեցաւ : Յարգոյ պաշտօնակիցներէս մէկըն ըսաւ թէ՛ սխալած եմ : Գործադիրը պատասխանատու եւ միանգամայն պատասխանատու է, ըսաւ : Այնպէս էֆէնտիքն ալ յայտնեց թէ՛ ես ծուռ ըմբռնած եմ ֆաղ ժողովոյ պաշտօնը : Ամեն ժողով մէկ գլուխ մ'ունի պատասխանատու, այս մասին եթէ քիչ մը համարձակորէն խօսելու ըլլամ, անշուշտ Ս. Պատրիարքն ինձ ներողամիտ կըլլայ, վասն զի իմ ըսելիքս իրեն առանձնակի չվերաբերի, ինքն ամենուս սիրելին է, եւ այնքան սիրելի է որ ժողովուրդն իր սրտի աւազանին մէջ զվնքը չ'ընէ՛ է միտքեր : Ս. Պատրիարքը մեր գլուխն

է, վաղն ուրիշ մը կուգայ, ըսել կուզեմ այնպիսի սահմանի մը մէջ գնելու եմք որ՝ ո՛վ ալ ըլլայ մեր գլուխը, թէ՛ սիրելի եւ թէ՛ տուելի, չկրնայ սահմանէն դուրս ելնել : Իսկ ֆաղ ժողովոյն գալով նա ուրիշ բան չէ, եթէ ոչ օժանդակ՝ գործադիր զվնքն : Եթէ նա օժանդակ չէ եւ գործադիր է, ի՞նչ հարկ կայ ուրիշ գործադիր : Ֆաղ ժողովը համարատու է գործադրին, իսկ պատասխանատուութիւնը գործադրին վրայ է : Ինչպէս կրնայ ըլլալ որ ֆաղ ժողովն անկախ կընտրեմք եւ գործադիրը պատասխանատու կընեմք, միթէ կարելի՞ է որ իմ գրասենեկին գրագիրներն ուրիշն ընտրէ եւ ես միայն իշխեմ անոնց : Երբ ֆաղ ժողովն ուրիշէն առնու իւր պաշտօնը եւ չգործէ, պատասխանատուն կը չարչարուի : Եթէ պատասխանատուն գործ չկրնայ տեսնել, Ազդն ալ կը չարչարուի : Ուստի այս կէտը լաւ ուշադրութեան առնուլ պէտք է եւ յանձնելու է գործադրին որ ընտրելեաց ցանկ մը չիտէ :

Իսկ թուոյն գալով, իմ կարծիքս՝ հակառակ Փախագեան էֆէնտիքի կարծեաց՝ սա՛ է թէ՛ որչափ քիչ ըլլայ թիւն՝ այնչափ աղէկ գործ կը տեսնուի :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Օսկանեան էֆէնտին նոր Սահմանադրութիւն մը կը ծրագրէ, մեք արդէն ունիմք Սահմանադրութիւն մը՝ որ գործադրութեան մէջ է՝ եւ անոր պատասխանութիւնները չեմք կրնար փոխել : Ասկէ առաջ ֆաղ ժողովոյ ընտրութեան համար ղեղձուժ մ'եզեր է, նոյնը ամեն անգամ չեմք կրնար ընել, ապա թէ ոչ հոս գործ չունիմք :

Նախագահ Սրբազան կը հրամայէ որ ատենաբանք յոսնկայս խօսին, առարկելով թէ խիստ պատշաճաւոր չէ Ընդհ. ժողովոյ նման մեծ ժողովոյ մը մէջ նստած տեղէն խօսիլ :

Հետեւապէս խօսք առնող Երեսփոխանք յոտարս կանգնած խօսիլ կսկսին :

ՊԱՌՆԱՍԵԱՆ Պ. ԷՅ. — Քաղաքական ազդաց մէջ ընդհանուր սովորութիւն եղած է որ Նախագահն ընտրէ իրեն գործակից պաշտօնեաները, չկայ եւ ոչ մէկ ազգի մը մէջ որ գործադիր պաշտօնութիւնը Երեսփոխանութենէն ընտրուի : Եթէ այսպիսի օրինակ մը ցուցնեն՝ կարելի է համոզուիմ :

Ասկէց զատ՝ փորձը ցուցըցած է արդէն որ 20 հոգիէ՛ բաղկացեալ ժողով մը անկարելի է

որ համամտութիւն ունենայ եւ գործէ : Փախագեան էֆ. կը կարծէ թէ անհամամտութեան համար չէ որ ամեն մարդ կը քաջուի ֆաղ ժողովէն, այլ պատասխանատուութենէ խոյս տալու համար, եւ ապացոյց կը բերէ թէ՛ շատեր կան պատրաստ ժողովականութիւնն ընդունելու, երբ Ընդհ. ժողովը Սահմանադրութեան համաձայն չարժի :

Կը պատասխանեմ թէ՛ Սահմանադրութեան նոյն յօդուածն է որ ասկէ առաջ հարուած մը տուաւ, դարձեալ նոյն արդիւնքը կրնայ տալ : ասոր տարակուսիլ հարկ չէ : Ուստի նորէն կըսեմ, քանի որ մեր առջեւ ուրիշ գլխաւոր ազգեր օրինակ ունիմք, պէտք է անոնց դրութեան հետեւիմք եւ արտօնութիւն տամք Ս. Նախագահին՝ գործադիր իշխանութիւն մը կազմելու : Իսկ գալով այն խնդրոյն թէ՛ ընտրութիւնը Ս. Նախագահին յանձնելով զիկտատորութիւն կըլլայ, կարծեմ թէ այդ բանն ես արտասանած եմ ասկէ առաջ տարբեր պարագայի եւ տարբեր ժամանակի մը մէջ, բայց պարագաներն այժմ փոխուած են : Եւ ի՞նչ հարկ բառական քաջքը ընել : Գործադիր իշխանութիւնն ո՛ր մասէն բաղկացեալ ըլլայ՝ թող ըլլայ՝ հոգ չէ, համամիտ չեղողն անմիջապէս հրաժարական կուտայ : Ուրիշ ազգաց մէջ այսպէս է : մեք ալ անոնց հետեւելու եմք : Ուրիշ զիտողութիւն մ'ալ կայ : Ինչպէս ամեն գործոց մէջ՝ նոյնպէս ժողովոց մէջ՝ չէ թէ միայն համամտութիւն՝ այլ եւ անձնական բարեկամութիւն ալ կը փնտուուի : ասանկ մարմին մը կազմել անհնար է, եւ քանի որ Սահմանադրութեան վերոյիշեալ յօդուածոյն անգործադրելի ըլլալը փորձով հասկցուած է, զայն փոփոխուած նկատելով պէտք է նախորդ ֆաղ ժողովոյն յար եւ նման ընեմք նոր կազմութիւնն ալ :

ՊԵՆԵԱՆ Ք. ԷՅ. — Խնդրոյն վրայ խօսելէ առաջ, ոտքի վրայ կենալու մասին Ս. Նախագահ չօր ըրած առաջարկութիւնը կը խնդրեմ որ քուէի դրուի, եթէ այս օրուրնէ պիտի գործադրի :

Ատենապետ էֆ. կընդդիմանայ խնդրոյն կարգէն չեղելուն համար :

Այս պահուն բուական շփոթ կը յառնէ ժողովոյն մէջ, եւ Ատենապետ էֆ. զայն հանգարտեցնելու համար Նախագահ Սրբազանի ա-

ռաջարկութիւնը միջանկեալ կերպիւ քուէի կը դնէ, ժողովն ամենամեծագոյն մասով կընդունի եւ կորոշէ որ այսուհետեւ ատենաբանք ոտքի վրայ կեյտ խօսին :

ՊԵՆԵԱՆ Ք. ԷՅ. — Ես չեմ ըսեր թէ Օսկանեան էֆէնտիք ըսածներն աղէկ բաներ չեն : Եւրոպայ մէջ այնպէս է եւ կարելի է մեզ ալ յարմարին : Բայց մեր արդի Սահմանադրութիւնը տարբեր դրութիւն մ'է, + միւրեւ մ'է : Պատրիարքը կրօն : Եւ ֆաղ ժողովոց վրայ կը հակէ, ասոնք ալ փոխադարձաբար Պատրիարքին վրայ : ո՛ւր տեսնուած է, այս լաւ դրութիւնը : Ասով չեմ ուզեր Ս. Պատրիարքին պաշտօնը փոքրրկացնել, ընդհակառակն կուզեմ աւելի բարձրացնելու աշխատիլ, բայց ոչ սահմանէն դուրս արդէն բարձրէ անոր պաշտօնը :

ՄԱՍԻԿՈՆԵԱՆ Մ. ԷՅ. — Ժողովս ասկէ առաջ կրօն : ժողովոյ ընտրութեան մասին ամեն տարբեր կարծիք մերժեց, վերաքննութեան ժամանակին թողուց եւ Սահմանադրութեան համեմատ կատարեց կրօն : ժողովոց ընտրութիւնը : Երբ այսօր կարգը կուգայ ֆաղ ժողովոց ընտրութեան, ինչո՞ւ չեղիլ Սահմանադրութենէն եւ տարբեր եղանակներու գիմել պէտք է ֆաղ ժողովն ալ ըստ Սահմանադրութեան ընտրեմք, ինչպէս կրօն : ժողովն ընտրեցինք : 20 թուոյն համար կըսուի թէ շատ է : Ըստ իս՝ որքան շատ լինի, այնքան աղէկ է : Թո՛ղ իր մէջէն ընտրէ իւր ճիւղերն եւ զըրսէն չմուրայ :

Մի քանի երեսփոխանք կը կրկնեն այս կարծիքը :

ՂԱԶԱՐՈՍԵԱՆ Ք. ԷՅ. — Կը կրկնեմ Մամիկոնեան էֆէնտիքի առաջարկութիւնն եւ կըսեմ թէ՛ այն Երեսփոխաններն որ կուզեն փոփոխութիւն մտցնել այս պարագային մէջ՝ թո՛ղ սպասեն վերաքննութեան : Ազնիւ պաշտօնակցիս մէկը պահ մ'առաջ ըսաւ թէ՛ պարագաները փոխուած ըլլալով կարծիքն ալ փոխած է : օրէնքը կարծեաց փոփոխութեան չենթարկիր : քանի որ օրէնք մը ունիմք՝ պէտք է որ անոր հետեւիմք, բարբարոս ազգերն են որ օրէնք չունին :

ՔՐԻՐԲՃԻՊԱՇԵԱՆ Բ. ԷՅ. — Ինչ յառաջ խօսողները խօսեցան ինչ որ ըսել կ'ուզէի : միայն մէկ կէտ մը կայ զոր կուզեմ յիշեցնել : Վե՛

Տարա շին շինք-ճարտար ճարտարները կարողացուեցան Մայր եկեղեցւոյ բեմին վրայ, 'ի ներկայութեան Սրբազան Պատրիարքի ուրեմն ինչ հարկ կայ ուրիշ միջոցներ ձեռք առնուլ, ինչպէս որ կրօն. ժողովն ընտրեցինք, ըստ այնքով քաղ. ժողովն ալ որ անոր ընկերն է պէտք է ընտրեւոր Սահմանադրութեան հետեւելով:

ՓԱՓԱՋԵԱՆ Ս. ԷՖ. — Երկու կէտ կայ որ գէշ սպաւորութիւն կրնէ ժողովին վրայ, Սահմանաւ ԷՖ. կրսէ թէ՛ Պատրիարքն է գործադիր, եւ քաղ. ժողովն ուրիշ բան չէ՛ եթէ ոչ անոր օգնականը. իսկ Պատնասեան ԷՖ. քաղ. ժողովոյն կուտայ գործադիր իշխանութիւնը:

Մեր Սահմանադրութիւնը կրօն. եւ քաղ. ժողովոց սուտ չէ գործադիր իշխանութիւնը. ժողովները կորոշեն եւ Պատրիարքը կը գործադրէ, որով նիւթական պատասխանատուութիւնը ժողովներուն վրայ կը մնայ եւ բարոյականը Ս. Նախագահին:

ՆՈՐԱՏՈՒՆԿԵԱՆ Յ. ԷՖ. — Ոմանք Սահմանադրութիւնը յարգել ուզելով կառաջարկեն որ քաղ. ժողովն ըստ Սահմանադրութեան 20 հոգիէ կազմուի, ինչպէս կրօն. ժողովն ըստ Սահմանադրութեան 14 հոգիէ կազմուեցաւ. իսկ ոմանք ընդհակառակն կառաջարկեն որ քաղ. ժողովը ճիւղերու բաժնուի, եթէ Սահմանադրութեան համաձայն պիտի լինի քաղ. ժողովոյ ընտրութիւնն, այն ատեն ճիւղերու բաժանման հարկ չմնար, ըստ որում այդ

ճիւղերն արդէն բաժնուած են Սահմանադրութեան մէջ:

Քանի մը ձայներ. — Բ. — Է. — Գ. — Զ. — Է. — Ը. — Թ. — Ժ. — Ի. — Կ. — Լ. — Խ. — Ծ. — Կ.

ԱՏԵՆԱՊԵՏ ԷՖ. — Դեռ 6 ատենարանք կան որ խօսք խնդրած են եւ խօսիլ կուզեն, բայց ժամը 10 անցած է:


Փախաղեան, Պէկեան եւ Քիւրքճիպաշեան ԷՖէնտիները նիստը շարունակել կը պնդեն, եւ Սակահեան ԷՖ. քուէի դնել կառաջարկէ:

Ս. Նախագահը՝ յառաջիկայ ուրբաթ նորէն ժողով գումարելու եւ խօսից կարգը շարունակելու պայմանաւ՝ ատենը գոցել կառաջարկէ, որոյ կը ձայնակցի նաեւ Եուսուֆեան Տ. ԷՖէնտի:

Ատենապետ ԷՖ. կը յօժարի ատենը գոցել, բայց շփոթութիւն կը տիրէ ժողովոյն մէջ, ժողովականաց մէկ մասին խնդիրն անմիջապէս քուէարկել, եւ միւս մասին՝ շարունակութիւնը յաջորդ նստին թողուլ պահանջելովը:

Հուսկ ուրեմն Պատրիարքական հրամանատենանը կը գոցուի ժամ 10 1/2 ին:

ԱՏԵՆԱՊԵՏ **ԱՏԵՆԱԳԻՐ**
Կ. ԳԱՐԱԿԷՕՋԱՆ **Յ. Զ. ՄԷՐԵԷՄ-ԳՈՒՂԻ**



ՀԱՅԿԱՍՏԱՆԻ ԵԿԵՆՑԻ ԵՊԻՍԿՈՍՈՍ

Հայաստանի Եկեղեցւոյ Եպիսկոպոս Ստեփանոս Ստեփանոս

ԳԻՆ 2 ՂՐՈՒՇ

ՍԵՓԱԿԱՆՈՒԹԻՒՆ ԱԶԳԱՅԻՆ ՄՆՁՈՒԿԻՆ

Կը ծախուի ի Դիւանատան Պատրիարքարանի, և կը գտնուի
Եկեղեցեաց բանկալները .